

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«___» _____ 2010

«Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ» ԲԲԸ-ն,
այսուհետ՝ «Կառավարող», ի դեմս տնօրեն Արթուր Գուլյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի
կողմից, և _____, (կազմակերպ. անվանումը կամ ֆիզ. անձի ա.ա.հ.),
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս _____, որը գործում է
(պաշտոն, ա.ա.հ.) _____
հիման վրա, (կանոնադրության, լիազորագրի կամ այլ(նի) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը
հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Սույն պայմանագրով՝ Կառավարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ
մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն
պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:
- 1.2 Կառավարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝

- Պատվիրատուի հանձնարարությամբ Երևան քաղաքում մատուցել
Էլեկտրոնային ստորագրության առաքման և տեղում հայտատուի
նույնականացման ծառայություններ,
- Պատվիրատուի հանձնարարությամբ Երևան քաղաքից դուրս՝ Հայաստանի
Հանրապետության տարածքում մատուցել Էլեկտրոնային ստորագրության
առաքման և տեղում հայտատուի նույնականացման ծառայություններ,
- Կառավարողի կողմից հավաստագրված կենտրոնի միջոցով մատուցել
Էլեկտրոնային ստորագրության ծրագրի տեղադրման և օգտագործման
ծառայություններ

այսուհետ՝ Ծառայություններ:

1.3 Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ պայմանագրի ստորագրման օրվանից մինչև հինգ աշխատանքային օր ընկած ժամանակահատվածը, եթե կողմերի միջև նախապես այլ համաձայնություն ձեռք չի բերվել: Կատարողն իրավունք ունի ծառայությունները մատուցել ժամկետից շուտ:

1.3.1 Ծառայությունները մատուցված են համարվում կողմերի միջև հաշիվ ապրանքագիրը ստորագրելու և հաստատելու պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ համապատասխան մասնագետների միջոցով:

2.1.2 Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում:

2.2 Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների համար վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գինը նույն կետում նշված ժամանակահատվածում:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

2.3.2 Ցանկացած ժամանակ հրաժարվել մատուցվող ծառայությունից՝ մինչև հրաժարման պահը Կատարողի կողմից փաստացի մատուցված ծառայությունների կամ տրամադրված տեղեկատվության դիմաց վճարելու պայմանով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1 Սույն պայմանագրով սահմանված էլեկտրոնային ստորագրության առաքման և տեղում հայտատուի նույնականացման ծառայությունների մատուցման գինը Երևան քաղաքում 7,500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, Երևան քաղաքից դուրս՝ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ համաձայնեցվում է կողմերի միջև՝ կախված վայրի՝ Երևան քաղաքից ունեցած հեռավորության, իսկ կատարողի կողմից հավաստագրված կենտրոնի միջոցով էլեկտրոնային ստորագրության օգտագործման ուսուցման ծառայության մատուցման գինը 7,500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ է՝ մեկ իրավաբանական անձի բոլոր հայտատուների համար:

3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է ծառայությունները մատուցվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ - ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է սույն պայմանագրի 3.2 կետով սահմանված պարտավորության կատարմամբ:

5.2 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին՝ երկու աշխատանքային օր առաջ նախազգուշացնելով:

5.3 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:

5.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.5 Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

Հասցե՝ _____

Բանկ՝ _____

Հ/Հ՝ _____

Տնօրեն՝

(ստորագրություն)

Կ.Տ.

Եթե պատվիրատուն ֆիզիկական անձ է, ապա քաղաքացու՝ -----

(ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն, անձնագրի սերիան, ե՞րբ և ո՞ւմ կողմից է տրվել)

Կատարող՝

«ԷԿԵՆԳ» ԲԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Մ/Մկրտչյան

Բանկ՝ ԱմերիաԲանկ ՓԲԸ,

Հ/Հ՝ 15700-04596000100

Տնօրեն՝ Ա. Ղուլյան

(ստորագրություն)

Կ.Տ.